Բոտուլիզմ

Բոտուլիզմը լուրջ հիվանդություն է, որն անդամալուծում է Ձեր մկանները: Այն առաջանում է բակտերիայից: Գոյություն ունի բոտուլիզմի 3 հիմնական ձև.

- կերակրի բոտուլիզմ,
- մանկական բոտուլիզմ և
- վերքի բոտուլիզմ:

Ինչպե՞ս ես կարող եմ վարակվել բոտուլիզմով կերակրի միջոցով:

Եթե Դուք ուտեք թունավորված ուտելիք, ապա կարող եք վարակվել բոտուլիզմով: Մարդկանց մեծամասնությունը հիվանդանում է 12-36 ժամվա ընթացքում: Բայց երբեմն այդ ընթացքը կարող է տևել մինչև երկու շաբաթ:

Եթե նույն ուտելիքը կերած մարդկանցից շատերը հիվանդանան, հնարավոր է, որ ուտելիքը թունավորված էր: Եթե նման բան պատահի, առողջապահական մարմինները կսկսեն հետաքննել: Հնարավոր է, որ ահաբեկիչները այս բակտերիան դրած լինեին ուտելիքի մեջ:

Ո՞վ կարող է վարակվել մանկական բոտուլիզմով:

Նորածինները, հատկապես 6 ամսական կամ ավելի փոքր տարիքի, կարող են այս հիվանդությամբ վարակվել թունավորված ուտելիքի կամ փոշու միջոցով: Նորածինները, որոնց կրծքով չեն կերակրում կամ որոնք ուտում են մեղր, ավելի հավանական է, որ վարակվեն մանկական բոտուլիզմով:

Ինչպե՞ս ես կարող եմ վարակվել բոտուլիզմով վերքի միջոցով:

Եթե բաց վերքի կամ կտրվածքի մեջ բակտերիա անցնի, Դուք կարող եք վարակվել այս հիվանդությամբ:

Արդյո՞ք բոտուլիզմը վարակիչ է:

Ոչ: Դուք չեք կարող բոտուլիզմ ստանալ մեկ ուրիշ անձից:

Ինչպե՞ս կարող եմ ես կանխել բոտուլիզմը:

Շատ դեպքերում, Դուք կարող եք կանխել բոտուլիզմը հետևյալ քայլերին հետևելով.

- Խուսափեցեք ոչ ճիշտ պահածոյացված կամ փչացած ուտելիքից:
- Բծախնդրորեն մաքրեցեք վերքերը:
- Մի' կերակրեք նորածիններին մեղրով:

Որո՞նք են բոտուլիզմի ախտանշանները:

- Դուք կարող եք ունենալ աչքերի հետ կապված խնդիրներ, ինչպես օրինակ աղոտ կամ կրկնակի տեսողություն կամ կախվող կոպեր:
- Հնչյունները կուլ տալով խոսելը:
- Կուլ տալու դժվարություն, բերանի ներսում չորություն:
- Մկանային թուլություն, որն սկսվում է ուսերում և թևերի վերևի մասում, ապա տարածվում է դեպի մարմնի ներքևի մասը:
- Ձեր շնչառական մկանները կարող են անդամալուծվել: Ձեր շնչառությունը կարող է դադարել և Դուք կմահանաք:

Արդյո՞ք ես կարող եմ մահանալ բոտուլիզմից:

Այո: Եթե Դուք անմիջապես օգնություն չստանաք, Ձեր շնչառությունը կարող է դադարել և Դուք կմահանաք:

Եթե դուք անմիջապես օգնություն ստանաք,Դուք հավանաբար կապաքինվեք: Եթե Ձեր թոքերը դադարեն աշխատել, Դուք կարիք կունենաք շնչառական մեքենայի, որը Ձեզ կօգնի շնչել: Ապաքինման ընթացքը կարող է տևել շաբաթներ կամ ամիսներ:

Ի՞նչ անել, եթե կարծում եմ որ վարակվել եմ բոտուլիզմով:

Հեռաձայնեցեք Ձեր բժշկին կամ հիվանդանոց ***անմիջապե՛ս:*** Ձեզ կարող է տրվել հատուկ դեղորայք: Եթե Դուք այն ընդունեք հիվանդանալուց անմիջապես հետո, այն կարող է թեթևացնել հիվանդության նշանները:

Հավելյալ տեղեկությունների համար...

Հեռաձայնեցեք CDC-ին (Centers for Disease Control) անգլերեն լեզվով տեղեկություն ստանալու համար.

800-CDC-INFO (800-232-4636)
888-232-6348 (TTY)

Կամ այցելեցեք ինտերնետ հետևյալ հասցեներով.

www.bt.cdc.gov/agent/botulism
www.dhs.ca.gov/epo